ՊԱՅԱՄԱՆԱԳԻՐ

ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ

ք. Երևան ՀՀ ԱՎԾ-Ծ21-2015/11 20.03.2015թ.

ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը, ի դեմս վարչական շրջանի ղեկավար Գևորգ Ղազարյանի /այսուհետ՝ Սպասարկող/ մի կողմից, ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Հայրապետյանի /այսուհետ՝ Պատվիրատու/ մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1.Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն պատվիրում է, իսկ սպասարկողը պարտավորվում է ապահովել՝ Երևանի քաղաքապետարանի կողմից վարձակալության պայմանագրով ՀՀ ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմին տրամադրված ք. Երևան, Դավիթ Անհաղթի 11 հասցեում գտնվող վարչական շենքի 6-րդ հարկի 16.5 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի (այսուհետ՝ տարածք) անհրաժեշտ էլ. էներգիայի մատակարարումը և քաղաքային հեռախոսակապի ապահովումը (այսուհետ՝ սպասարկումը):

1.2. Սույն պայմանագիրը կնքվում է Երևանի քաղաքապետարանի և ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջև կնքված ք. Երևան, Դավիթ Անհաղթի 11 հասցեում գտնվող վարչական շենքի 6-րդ հարկի 16.5 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի գործողության ժամկետով՝ մինչև 2017թ-ի դեկտեմբերի 31-ը:

1.3. Կողմերը, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 441-րդ հոդվածի 2-րդ կետով, սահմանում են, որ սույն պայմանագրի գործողությունը տարածվում է 2015թ.-ի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

2. Կողմերի պատասխանատվությունը

2.1. Սպասարկողը պարտավորվում է.

ա/ Ապահովել Պատվիրատուի կողմից նշված տարածքի անհրաժեշտ էլ. էներգիայի մատակարարումը և քաղաքային հեռախոսակապի ապահովումը:

բ/ Պատվիրատուի կողմից վճարումները կատարելու նպատակով ստորագրել և Պատվիրատուին հանձնել հանձնման-ընդունման արձանագրություններ, հաշիվ ապրանքագրեր:

2.2. Պատվիրատուն պարտավորվում է.

ա/ Սպասարկողի կողմից 2.1. կետի բ/ ենթակետում նշված փաստաթղթերը ներկայացնելուց հետո 7 բանկային օրվա ընթացքում վճարել սպասարկման վճարները: Դրամական միջոցների վճարումն իրականացվում է անկանխիկ՝ հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա:

2.3 Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման դեպքում Սպասարկողից գանձվում է տուգանք՝ խախտում կատարելու ամսվա դրությամբ պայմանագրի գնի 0.5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

2.4 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Սպասարկողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

2.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 2.2 կետի ա/ ենթակետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

2.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

3. Սպասարկման վճարը

	Սպասարկման ծառայությունը	սպասարկման վճարը /ամսական/	սպասարկման վճարը /տարեկան/
ա.	Էլեկտրաէներգիայի մատակարարում	Ըստ հաշվիչի ցուցմունքի	Ըստ հաշվիչի ցուցմունքի
բ.	Քաղաքային հեռախոսակապ	Ըստ սահմանված դրույքաչափի	Ըստ սահմանված դրույքաչափի

4. Այլ պայմաններ

4.1. Սույն պայմանագրով չկարգավորված բոլոր հարցերը լուծվում են ըստ ՀՀ գործող օրենսդրության:

4.2. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

5.1 Սույն պայմագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու դեպքում կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները և այլն, որոնք անհնար են դարձնում պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 /երեք/ ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՍՊԱՍԱՐԿՈՂ	ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան	ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն աշխատակազմ
ՀՎՀ 90003550041 3	ՀՎՀ 900011011013
ՀՎՀՀ 02507108	ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
	ՀՎՀՀ 02507509
Հասցե՝	Հասցե՝ ք. Երևան, Կառավարական տուն 3,
Վարչական շրջանի ղեկավար	Աշխատակազմի ղեկավար
----------	---------- Ա. Հայրապետյան
/ ստորագրություն /	/ ստորագրություն /
Կ.Տ	